

1.2.6. Կապ

Հայաստանի Հանրապետությունում 2003թ. հունվար-մայիսին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին նատուցած ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է 20765.8¹ մլն.դրամ, որը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ համադրելի գներով աճել է 7.0%-ով: Նշված հասույթից բնակչությանը նատուցված ծառայությունների բաժինը կազմել է 11139.4 մլն. դրամ, որը 2002թ. հունվար-մայիսի նկատմամբ համադրելի գներով աճել է 17.3 %-ով:

¹ Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-մայիսին»